

ՃԱՆԱՊԱՐՀՈՐԴՈՒԹԻՒՆ ԹԻՒՐԳԱՅ ՔՐԴԱՍՏԱՆՈՒՄ *)

(Վանից—Շէմզղինան)

Տակաւին աղօթարանը չբացուած, արշալոյսի մերձեցումից միայն քիչ աղօտացած լուսնի շողերի տակ ցած ենք իջնում Նէղի-Թէփէլէրի, բուսականութեամբ ոչ այնքան հարուստ վայրէջքից՝ մանելով Բաշգալէի դէզը (տափարակը)։ Այստեղ մեր ճանապարհը բաժանուում է երկուսի—ձախակողմեանը տանում է ուղղակի դէպի Գէվէնը, իսկ աջակողմեանը քիչ շեղելով ճանապարհի ուղղութիւնից, տանում է դէպի Բաշգալէ բերդաքաղաքը, որ շինուած է համանուն դաշտի արեւմտեան սահմանը կազմող բարձրաբերձ բլուրների ժայռոտ լանջի վրայ, երբեմն նահանգական քաղաք Հէքիարիի կուսակալութեան ¹⁾ (եբբ սա դեռ չէր միացել Վանի կուսակալութեան հետ), այժմ կենտրոնատեղի Բաշգալէի սանջակի Մութէսարիֆութեան։

Բաշգալէն ունի մօտաւոր հաշուով 3,000 բնակիչ, որի մեծամասնութիւնը հրէայ տարրն է կազմում. հայերը հաշուած են 150 տուն, իսկ ֆնացեալը թուրք են և քիւրդ։ Առևտուրը հրէաների և հայերի ձեռքին է, ինչպէս արհեստները. վաճառանական ապրանքները ստացւում են գլխաւորապէս Վանից և քիչ անգամ ուղղակի Կ. Պոլսից, և այն՝ Վանի ճանապարհով։ Քաղաքը ունի 150-ի չափ խանութներ։

Բաշգալէում հայերը ունեն մի եկեղեցի՝ ս. Երրորդութիւն անունով. այստեղ է բացուել և հանդուցեալ Գր. Ջանշինկի որբանոցներից մէկը՝ 25 որբերով։ Տները Բաշգալէում հում աղիւսից է շինած, կան և երկյարկանի շինութիւններ։ Քաղաքի օդը լաւ է որպէս և ջուրը, որ ստացւում է աղբիւրներից։ Դիրքը քաղաքի՝ խորդ ու բորդ է, իսկ բնակութիւններից վերև ժայռերի

*) Տես «Մուրճ» № 5.

¹⁾ Այդ կուսակալութիւնը կազմող գաւառներն էին՝ Աղբակ, Զուլամբրիկ, Գէվէն, Նորդուզ և այլն։

վրայ, բարձրանում են Բաղալէի հինաւորը, հռչակաւոր բերդի աւերակ մնացորդները:

Շարաթը մի անգամ ստացւում է Վանից տաճկական պոստը, որը իր կարգին ուղարկւում է Գէվէն և Շէմզդէինան: Բաղալէն հեռագրական զօր միջոցաւ անմիջական հաղորդակցութեան մէջ է Վանի, Շէմզդէինանի և Սալմաստի (Պարսկաստան) հետ:

Բաղալէում նստում է այդ գաւառի առաջնորդը, և միաժամանակ ս. Բարթողիմէոս վանքի¹⁾ վանահայրը (այժմ, Արսէն վարդապետ Գէորգեան Կ. Պոլսեցի): Այստեղ հարկաւոր է նկատել, որ մուտք գործելով Աղբակ, մենք մտած ենք լինում միաժամանակ և իսկական Քիւրդիստանը, քրդերի տիրապետութեան սահմաններում, որտեղ նա համարեա կիսանկախ է, երես առած և թելադրուած տիրող կառավարութիւնից, թշնամական տրամադրութեամբ հայ տարրին հանդէպ այժմ նոյն սահմարձակ վերաբերմունքն է ցոյց տալիս նա, ի հարկին, և տաճիկ իշխանութեան դիմաց: Աղբակի արեւմտեան մասերում՝ Բաղալէի հարաւակողմը ընկնում են Մարթոցի կոչուած քրդական ցեղերը (աշիրէթ): Արեւելակողմը՝ թիւրքաւորական սահմանը կազմող Զազրոշի լեռնաշղթայի արեւմտեան տաճկական մասի լանջերի վրայ տարածուել են Մարգիկցիները, տխրահռչակ Շէրէֆ-բէկ ցեղապետի գլխաւորութեամբ: Սրանցից դէպի հիւսիս, Պոշապ գաւառի արեւելեան մասի ամբողջ երկարութեամբ Մուկուլուցի և Թակուլուցի քրդական ցեղերն են ապրում. իսկ Աղբակից դէպի հարաւ, սահմանակից Գէվէն ու Շամզդէինանը, մինչև Մուլուլ, Բաղալէ ու Բասրա քաղաքները, սակաւ բացառութեամբ, քրդաբնակ կենտրոններ են ներկայացնում:

Բաղալէից դէպի հարաւ, նրանից կէս ժամուայ ճանապարհ միայն հեռաւորութեան վրայ, գտնւում է Ռասիլլան

1) Բաղալէից 4 ժամ հեռաւորութեան վրայ, դէպի արեւելք, գտնւում է Բարթողիմէոս առաքելի վանքը, կառուցուած ըստ աւանդութեան, նոյն առաքելի նահատակման վայրում: Հին Արեւիմոս կոչուած քաղաքի մօտ, Զապ կամ Գալ պետի ափին մի հրաշալի ձորակում: Երբեմն հոյակապ, շէն և հռչակաւոր այս եպիսկոպոսանիստ վանքը վերջին մի քանի տասնեակ տարիների ընթացքում ենթարկուել է թիւրք և քիւրդ տարրի պարբերական բարբարոս աւերածութիւններին և կողոպուտին: Աներեւակայելի, հսկայ քարերով շինուած այս անդուգական վանքի մի ժամանակ բազմաթիւ ուխտաւորների համար շինուած սենեակները և խցերը ծառայում են այժմ որպէս պահականոց մի վաշտ տաճկական սահմանապահ զինուոր-ներին:

գիւղը, ուր բնակուում է նշանաւոր քիւրդ Շէյխ-Համիդ-փաշա, տաճիկ կառավարութիւնից ճանաչուած որպէս թիւրք-պարսկական սահմանադիւխ սահմանապահ կոմիսար: Սա հակառակ իր անհաշտ թշնամութեան դէպի մարզիկցիների պարագլուխ՝ Շէրէֆ-բէկը, բարեկամական և խնամիական կապերով կապուած է Շամզդինանի մեծ շէյխի՝ Շէյխ-Մահմադ-Սըտըղի հետ:

Շարունակելով մեր ճանապարհը Բաշգալէի դաշտի երկաթուղեամբ, դէպի հարաւ, հասնում ենք Աղբակ գաւառի մեծ գիւղերից մէկը՝ հայաբնակ Հէրէսան գիւղը, որ ունեցել է մի ժամանակ 78 տուն բնակիչ, 230 բեռ սերմ, ոչխար՝ 1200, եղ և կով՝ 200, գոմ՝ 150, ջրաղաց՝ 3, ձիթահան՝ մէկ. կոտորածների ժամանակ սպանուած է տուել 3 անձ, իսկ թալանուել է գիւղը իր ամբողջ հարստութեամբ:

Դարձեալ ճանապարհի վրայ, Հէրէսանից հազիւ մի ժամ հեռու, գտնուում է Աղբակի երեքմիւս ամհնահայաշատ և ամենամեծ գիւղը՝ Առակ, որ ունէր 80 տուն բնակիչ, 220 բեռ սերմ, 400 ոչխար, 200 եղ և կով, 150 գոմ, 2 ջրաղաց, 2 ձիթահան. կոտորածի ժամանակ սպանուել են 11 հոգի, առեանգուել՝ մի կին, մի կին էլ կրօնափոխ է եղել (իսլամացել է), իսկ ամբողջ գիւղը նմանապէս թալանի և կոդուպուտի է ենթարկուել:

Առակ գիւղի հիւսիսակողմը մնում է գետ ևս կանգուն գիւղական քարաշէն սիրուն եկեղեցին, կարմիր սրբատաշ քարերից կառուցուած, ընդարձակ գերեզմանատնով: Եկեղեցու հարակողմը տաքածուում է, գերեզմանների հողակոյտերի նման, թալանուած Առակի հայ տների կիսակործան փլատակները: Այդ երեքմիւս շէն գիւղի հայ բնակիչներից մնացել են միայն 8 տուն հայեր. զուրկ սեփականութիւնից, մերկ և աղքատ: Իրանց նախկին հարստութիւնից, շարժական և անշարժ կալուածքից—որոնց ճշգրիտ ցուցակը ես մի քիչ վերեւ առաջ բերի—ոչինչ է մնացել համարեա. այդպիսով վերածուել են նըրանք, հայրենի հողերի վրայ բռնութեամբ հաստատուած, քիւրդ կալուածատէրերի ձորտեր, բայաթներ և ակամայ համակերպած իրանց նոր սեփականագուրկ, ստրկական վիճակին, վերցնում են իրանց տէրերից երկրագործական միջոցները, իրանց արիւն-քրտինքով բազմապատկում են օտար սերմը, օտար եղներով, մի ժամանակ իրանց պատկանած հողի վրայ, և տալիս են աղային, իրանք ստանալով այդ արդիւնաբերութիւնից շատ չնչին, ողորմելի տոկոս՝ միայն՝ իբր վարձատրութիւն իրանց եգիպտական ծառայութեան:

Դեռ առաւօտ էր, արեգակը տակաւին նոր էր բարձրա-

ցել արևելեան հորիզոնի վրայ. Առակի եկեղեցին դիտելուց յետոյ, անցնելով աւերակ տների փլած պատերի տակով՝ մօտենում եմ տակաւին կանգուն մնացած ընակութիւններին, ուր գիւղական խրճիթներից մէկի առջև դառնում եմ կանգնած մի հայ գիւղացու. ներս եմ մտնում խրճիթը, բաղկացած երկու զետանափոր, խոնաւ բաժանմունքներից (թոնրատուն և գոմ) կտուրի վրայ բացուած երկու փոքր էրտիաներով (լուսանցք, աւելի ճիշտ՝ ծուխանցք). թոնիրի կողքին կեղտոտ, գլուտած փալանների մէջ փաթաթուել են կիսամերկ երկու երեխաներ, կողք-կողքի, և քնել նոյնպէս կտրտած թաղիքի վրայ. Ներս հրաւիրող տանտէրը տալիս է ուրախութեամբ, և հայ-ախպէր տեսած լինելու պոհունակութեամբ լի, նոր կթած փրփրուն կաթից մի հողի ամանով, և մինչդեռ ցնցոտիներ հագած տանափորներ խրճիթի մի անկիւնում զբաղւում էր կաթի տնտեսութեամբ, նա պատմում է ընդմիջումներով մելօդրամական պատմութիւններ, սիրտ կտրատող էպիզոտներ հայկական պանիկայի օրերից և իրանց իրականութիւնից: Հագիւ է կարողանում հայերէն խօսել՝ յաճախ քրդական բառերի օգնութեան դիմելով: Յայտնում է որ հագիւ կէս ժամ հեռաւորութեան վրայից, Բաղալէի քահանան միայն երբեմն-երբեմն (տարէն մի երկու անգամ, կնուք կամ մեռեալ պատահած ժամանակ) բարեհաճում է այցելել, կենտրոնին այնքան մերձակայ այս գիւղերը, հայութեան այս ողորմելի բեկորների հոգնոր մխիթարութեան համար, քանի որ իրանք քահանայ չունին. ասեմք ապրեցնել էլ չեն կարող մի քահանայի: Պարզ է որ շատ չանցած՝ Աղբակի մի քանի գիւղերի մէջ դիմացած այս սակաւաթիւ հայերը հայութեան համար իսպառ կորած պէտք է համարել: Սրանց բարբառը քիչ մօտենում է Սալմաստի հայերի բարբառին, և որպէս մօտազոյն վայրը պարսկական սահմանագլխին՝ (հագիւ 6 ժամուայ ճանապարհով) գործածւում է պարսկական փողը, այն չափով՝ որ չափով՝ տաճկականը:

Պէտք է ասել, որ կոտորածի արհաւիրքների ժամանակը Աղբակ գաւառը աւելի է տուժել քան ուրիշ որևէից հայաքնակ վայր: Շրջապատուած լինելը քրդական անհամբոյր, վայրենի տարրերով, այլ և ինքնապաշտպանութեան միջոցների բացակայութիւնը ոչ պակաս նպաստել են կոտորածի և աւերածութեան հսկայական չափերին: Աղբակի մնացեալ հայաքնակ գիւղերից Բազ՝ 60 տուն, Մալքաւա՝ 30, Կարապուլի՝ 13, Երնկանի՝ 75, Խառատում՝ 32, Հասպիստան՝ 45, Սորատէր՝ 30, Բարսի, Աշկերտ՝ 4, Բժնկերտ՝ 35, Հաշկոտ՝ 30 և Զակովկ՝ մէկ տուն հայ բնակիչ ունեցող գիւղերը կորցրել են

այժմ իրանց բնակիչները ^{3/4} մասը ¹⁾ այդ գիւղերից այժմ կան
այնպիսիներ օր. Բաբլաւսան և այլն, որոնց հայկական դարա-
ւոր օջախների բուխարիներից կտրուել է իսպառ հայ կրակի
ծուխը: Զակովկ գիւղում ապրող միակ հայ ընտանիքը 40 ան-
դամներից բաղկացած, ըռնի իսլամացել է: Աւելորդ չլինի
գուցէ ասել, որ այդ ժամանակներում սպանուեց Բաշդալէի
յաջորդ և միաժամանակ Բարդուղիմէոս վանքի վանահայր-
վարդապետը՝ նոյն վանքում:

Աղբակեցիները համար միակնպաստաւոր հանգամանքը, այդ
աղէտների ժամանակ, եղել է պարսկական սահմանի մերձակա-
յութիւնը. և իրօք աղբակեցին այդ հանգամանքից օգտուելով
գաղթել է, ամեն ինչ թողած, ահագին խմբերով ընտանիքնե-
րով դէպի Պարսկաստան, և տեղաւորուել Ուրմիի և Սալմաստի
հայաբնակ գիւղերում, առաւելապէս Սաւրայում և Հաֆթուանում:

Հեռանալով Առակ գիւղից, մեր ճանապարհը ընթանում է
գարնան հրաշալիքներով պծնուած այն հիւանալի հովիտի կող-
քով, որի մէջտեղով հոսում է սիրուն պտոյտներ գործելով,
հիւսիսից հարաւ ուղղութեամբ, Զապ գետը, Բաղուղիմէոս
վանքի առաջից անցնելուց յետոյ: Հովիտի մէջ գետի երկու ա-
փերի վրայ տարածուած է դեռ չհասկած ցորենի կանաչ փար-
թամութիւնը, Զապի կենսատու ջրի աղբեցութեամբ ուռճացած:

Շատ չանցած՝ մենք հասնում ենք Զապի և Նրա օժան-
դակ՝ Գեղագոմի ջրի միախառնուելու վայրը, որից յորդած գե-
տը հսկայ հոսանքով և ծովացած-անցնում է մի բարաշէն հո-
յակապ կամարներով կամրջի տակից և հոսում մոլեգին թափով
դէպի հարաւ: Կամրջի կամարներից երկուսի մէջտեղում կայ
կամրջապահի մի ընդարձակ տնակ՝ այժմ անբնակ:

Անցնելուց յետոյ այդ կամրջի վրայից, մենք առաջ ենք գը-
նում այժմ Մարգիկցի քրդական ցեղի պետ՝ Շէրէֆ-բէկի տի-
րապետութեան սահմանի միջով: Ճանապարհի արևելեան կող-
մը բարձրանում են այն անմատչելի և ամենի քառաժայռերը,
որոնց բարձրունքների վրայ բուն դրած թառել է աւազակա-
պետ Շէրէֆը իր արբանեակներով: Հեռուից երևում են Արա-
ուլի կատարները, Նրա ստորոտում՝ Խանասորը, աւազակապե-
տի երբեմնի յիշատակելի անցեալ ունեցող վրանատեղին, ո-
րի շուրջը կատարուած անմոռաց դէպքերը նոյն ըրպէին ցըց-
ւում են մարդուս մտքում...

Աւազակապետ Շէրէֆը մինչև այսօր էլ իր ասպատակու-
թիւններին վերջ չի դրել. ահ ու սարսափ է տարածում իր իշ-

1) Այս մասին տես «Die Fahne» vol. V № 24 1896 թ.:

խանապետութեան սահմաններում և երես առած տաճիկ կառավարութեան խրախոյսներէից, նա ընտնում է անց ու դարձի ճանապարհները, կողոպտում է անմեղ անցւորներին, նոյնպէս կարաւանները, ում էլ որ պատկանելիս լինին. թալանում է վաճառականների ապրանքները, անպաշտպան գիւղերը և ամենայն ինչ՝ որին նրա և նրա հրոսակների աւերիչ ձեռքը հասնել կարող է, ի հարկին արիւն թափելուց էլ չխորշելով:

Շարունակելով մեր ճանապարհը, ամէն մի ըոպէում աւազակների կողմից թալանի և սպանութեան յարձակում կրելու հաւանականութեան մտածութիւններով պաշարուած՝ անցնում ենք Հըզու կամ Մոզէ քրդական փոքր գիւղի մօտով, որ ընկնում է մեր ճանապարհի ձախակողմը, և որի բնակիչներից 4—5 տունը հայերն են կազմում: Հըզուից յետոյ մինչև Գէվէնը այլևս հայ գիւղերի չենք պատահի մենք և Բաշգալէի դաշտի հարաւային սահմանի վրայ ընտրում ենք մեր ճանապարհորդութեան չորրորդ գիշերուայ հանգստավայրը, Զապի օժանդակ առուակներից մէկի կանաչ ափին, ճանապարհի եզրքով, որի արևմտակողմը, կէս ժամու հեռաւորութեան վրայ երևում է Էօմէր աղա քրդական գիւղը, տարածուած մի սիրուն ջրաշատ տափարակի վրայ, ճոխ արօտավայրերով, ցորենի և կանաչ արտերով շրջապատուած:

Շրջապատի բլուրները ձգում են իրանց երկար ստուերները այս հիւսնալի հովիտի վրայ, և ծածկում նրա ամեն գեղեցկութիւնները միանգամից՝ մեր կարօտ աչքերից: Մութը պատելու հետ, պատում է մեզ և աւազակային յարձակում կրելու երկիւղը, մանաւանդ որ կարաւանը շատ հարուստ լինելով՝ կարող էր գրգռած լինել քրդերի վայրենի ախորժակները: Այն ժամանակ դուրս է գալիս ճանապարհի վրայ կարաւանատէր (շէմ-զդինանցի) բերդերից մէկը և կէս ժամու ընդմիջումներով, մի քանի անգամ, կանչում է բարձր ձայնով, որպէս անվախ ազդարարութիւն, մօտաւորապէս հետևեալ սովորական բանաձևը:

—«Այլ մալէ կարվանայ եա շեխա, նան խազի՝ որայ նան բըդամ. ալ դը խազի՝ որայ ալ բդամ, ակեար սըբայ կազա կիյէ կավըմի, ալ կազընդայ շըխ ժեվոտ կեատ» ¹⁾:

Կ—ցի

(Կը շարունակուի)

¹⁾ «Այս կարաւանի ապրանքները մեծ շէյիին (Մահմադ-Սըդըղիսի) են՝ պատկանում. եթէ հացի կարօտ էք՝ եկէք ձեզ հաց տանք, ջուր էք ուզում եկէք ջուր տանք, միայն թէ մենք ազատ ենք յայտարարում մեզ ձեր շարամիտ ձեռնարկութեան հետևանքի պատասխանատուութիւնից»: